

Մեռած խուրձեր հանդիսանա աշքերիս —  
 Այն ժամանակ սիրուն տեսքդ եմ ափսոսում՝  
 Մի՞թե նրան զլ ժամանակը պիտ տանի՝  
 Գեղեցկության ջնորհքն հավիտյան չէ տեսում  
 Հինը գնում է տեղը պիտ նորին պատկանի:  
 Բայց ճար շրկա փըրկըվելու նրա գերընդուց, մի հուզվի՝  
 Դու էլ դրա դեմ ժառանգներով կարող ես միշտ նորոգմիլ:

#### Գ. ՖՆՏԳԼՅԱՆԻ ԱՆՏԻՎ ՆԱՄԱԿԸ

Առաջարան և հրապարակում ԱՐՓԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Մանշեստրաբնակ գիտնական, բանասեր և հասարակական գործիչ Գառնիկ Ֆառնիկ Ֆնտղլյանը (1864—1936) հայտնի է բանասիրությանը իր ուսումնասիրություններով և հոդվածներով: Հիմնականում աշխատակցել է «Ամսախ» և «Անահիտ» պարբերականներին, տպագրելով Մանանդյանի «Խորենացու առեղծվածի լուծումը», «Աշխարհաբարի ընթացքը ԺԹ Քարուն», «Կորյոնի վարքը» ուսումնասիրությունները և այլ բազմաթիվ հոդվածներ: Բազմազան նախասիրություններ ունենալով, Ֆնտղլյանը զրադվել է նաև թարգմանությամբ: Նա թարգմանել է Ենքսափիրի «Անտոնիոս և Կիեռպատրո» դրաման: Բացի այդ՝ թարգմանությանը կցել է մի բնդարձակ առաջարան, որը վկայում է նրա գրական-շեքսպիրագիտական հիմնավոր պատրաստությունը: Իր թարգմանությունը Ֆնտղլյանը տպագրել է նաև «Անահիտում», ապա՝ 1911 թվականին, առանձին գրքով:

Ստորև բերվող նամակը, որ հրապարակվում է առաջին անգամ, հասցեագրված է բանաստեղծ, լրագրող, հասարակական գործիչ Վահան Մալեզյանին: Նամակը գրված է թարգմանության մի օրինակը Մալեզյանին ուղարկելու առիթով: Այս նամակը հետաքրքիր է որպես թարգմանչի անկեղծ մտորումների վկայություն, ինչպես նաև Ենքսափիրից այլ գործեր թարգմանելու մտադրությամբ, որը, որքան հայտնի է, չի իրադորժիլ:

Մանշեստր 1912 ապրիլ 25

Սիրելի Վահան,

Շատոնց կուզեի եգիպտոսի անմոռանալի թագուհիին վերա Շեքսպիրի գրած հոյակապ թատերգության թարգմանության օրինակ մը Զեզի դրկել, բայց միշտ կհետաձգենի որպեսզի նամակ մը միասին գործով խընդրեմ որ համբերությունը ունենաք մինչև ծայրը կարդալու: Ավա՞ղ, հեղինակի կամ թարգմանչի նվեր դրկած գրքերուն բախտը միշտ այդ չէ եղած, և լսած եմ շատ անգամ գնահատականի մը առաքումը՝ առանց գործը վերծանելու, ըստ բախտի հոս հոն աշք նետելով կամ երկու տող ալ հառաջարանեն կարգալով միայն: Ինծի մեծ հաճույք մը եղավ այս թարգ-

մանության պարագումո, որովհետեւ անձինքը պատմական են, և զի շատ հետաքրքրող ժամանակամիջոցի մը մեջ ապրած, որովհետեւ հայ աշխարհը, հայ թագավոր մը ստվերորեն կանցնեն մեկն, ավագ, միշտ ճակատագրին կովախնձորի հանգամանքովնին, և որովհետեւ գերադրապես զրավիչ, խելահեղիչ, խորհրդացույց էակ մըն է եղած Կլեոպատրան, որուն մեց սիրո մեծությունը թագուհիի վեհության հետ լծորդված հաղվազյուտ սիրանք մը կրնծային նկարագրին:

Չափը որով զրեցի սկիզբները նեղեց զիս, և կարծեմ աշխարհաբարի մեջ նոր օրերու թատերգությանց համար չի զործածված, բայց զեսի վերջեր՝ կարծեմ ավելի ընտելացուց:

Միարա է Համբետ և Խոմենու ու Ճյուղեթ, և կիր թագավորը ձեռք առնել կարգավ, միշտ նույն շափով, ու փոխնիփոխ արձակ ու շափավոր, ինչպես է բնագիրը Թերես մնայուն բան մը ըլլան այս թարգմանությունները, որոնք գոնե բնագրին մեջ զործված խոշտանգումներ, խժաժություններ ըրլամուն կրնա մարդ ապահով ըլլաւ, ևս արդեն զանվածները ուրիշ անունով շեմ կրնար կոչել, համբերությամբ բազգատելու ձեռնարկած ըլլալով, և որշափ անսպառ համբերություն ունենալու է մարդ ատոր համար:

#### Սուրենյանի հետ կտեսնվի՞ր:

Իր զնահատականը թարգմանության վերա այնքան արդարորեն և դիտակցորեն զնահատող՝ զիս իր պարտապան ըրած է, և իր հողվածի մը ստիպող պահանջը զո՞հացնելու կհարկադրե, թեպետ զլուկս բռնված է ամեն կերպ մտածումներե, և խնամյալ, ազատ հողված մը արաւագրել պիտի պետք ունենար ավելի հանդարտամառության, Շներսպիր intime կուզեի զրել, կամ վիպակ մը, որոն հերոսը Մանշեստրի ծանոթ երիտասարդ մըն է եղած. թերես Զեր պատասխանն աղդվիմ մեկը կամ մյուսը նախընտրելու:

Եթե աղաս (որ հիմա զործիս բերած եմ) ավելի վարժեցնեմ, կհուսան ավելի լայն շափով մը օգտվել մեր այնքան մոտիկ մտերմութենն վայելու համար թղթակցություն մը Զեղ հետ, որ իմ հաճույքներուս մեծերեն պիտի ըլլար:

Զերդ անկեղծորեն

Գ. Ֆնովլյան